Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն 4

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներքին աուդիտի կոմիտեի նիստի

25.11.2013թ.
ժ. 11.00

ք. Երևան
ՀՀ ԱՍՀՆ նիստերի դահլիճ

Մասնակցում էին՝
Կոմիտեի նախագահ՝ Ա. Ասատրյանը
Կոմիտեի անդամներ՝ Ա. Պետրոսյանը, Ֆ. Բերիկյանը, Ջ. Բաղդասարյանը, Ս. Հարությունյանը, Ա. Գրիգորյանը, Ս. Տերտերյանը.

Հրավիրված էին՝ Դ. Հակոբյանը, Ա. Սիմոնյանը, Վ. Աբազյանը, Թ. Ավետիսյանը, Ա. Մանգասարյանը, Ա. Մանվելյանը, Ա. Ավետիսյանը, Ա. Կեսոյանը, Ա. Մինասյանը, Ֆ. Բեջանյանը և Ա. Բարսեղյանը.

Նիստը բացման խոսքով սկսեց ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար, կոմիտեի նախագահ՝ Ա. Ասատրյանը, նա հրավիրեց ներկաների ուշադրությունը ներքին աուդիտի կոմիտեի նիստի օրակարգին: Ներքին աուդիտի կոմիտեն միաձայն **ՈՐՈՇԵՑ** հաստատել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներքին աուդիտի կոմիտեի 2013 թվականի նոյեմբերի 25-ի նիստի հետևյալ օրակարգը:

ՕՐԱԿԱՐԳ
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներքին աուդիտի կոմիտեի 07.10.2013թ. նիստի

1. Հայաստանի Հանրապետության 2012 թվականի պետական բյուջեի ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 10 բաժնի, 05 խմբի, 01 դասի «02.Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի ընդունելիս աշխատավարձի մասնակի փոխհատուցում գործատուին» ծրագրի

աուդիտորական հաշվետվությունում արձանագրված թերությունների և ներկայացված առաջարկությունների մասին:

(Զեկուցող ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ Ս. Տերտերյան)

2. Հայաստանի Հանրապետության 2012 թվականի պետական բյուջեի ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 10 բաժնի, 05 խմբի, 01 դասի «07. Այլ վայր աշխատանքի գործուղվող գործազուրկների նյութական ծախսերի հատուցում» ծրագրի աուդիտորական հաշվետվությունում արձանագրված թերությունների և ներկայացված առաջարկությունների մասին:

(Զեկուցող ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ Ս. Տերտերյան)

3. Հայաստանի Հանրապետության 2012 թվականի պետական բյուջեի ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 10 բաժնի, 05 խմբի, 01 դասի «12. Մասնագիտություն ունեցող, սակայն աշխատանքային փորձ չունեցող գործազուրկների և աշխատանք փնտրող զբաղված հաշմանդամների աշխատանքային պրակտիկայի կազմակերպումը գործատուի մոտ» ծրագրի աուդիտորական հաշվետվությունում արձանագրված թերությունների և ներկայացված առաջարկությունների մասին:

(Զեկուցող ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ Ս. Տերտերյան)

4. Հայաստանի Հանրապետության 2012 թվականի պետական բյուջեի ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 10 բաժնի, 05 խմբի, 01 դասի «13. Կազմակերպություններում հաշմանդամների համար աշխատատեղերի հարմարեցում» ծրագրի աուդիտորական հաշվետվությունում արձանագրված թերությունների և ներկայացված առաջարկությունների մասին:

(Զեկուցող ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ Ս. Տերտերյան)

5. Հայաստանի Հանրապետության 2012 թվականի պետական բյուջեի ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 10 բաժնի, 05 խմբի, 01 դասի «11.Աշխատանք փնտրող հաշմանդամների աշխատանքային վերականգնման, մասնագիտական վերապատրաստման և խորհրդատվության ծառայություններ» ծրագրի աուդիտորական

հաշվետվությունում արձանագրված խախտումների և ներկայացված առաջարկությունների մասին:

(Զեկուցող ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ Ս. Տերտերյան)

1. Հայաստանի Հանրապետության 2012 թվականի պետական բյուջեի ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 10 բաժնի, 05 խմբի, 01 դասի «02. Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի ընդունելիս աշխատավարձի մասնակի փոխհատուցում գործատուին» ծրագրի աուդիտորական հաշվետվությունում արձանագրված թերությունների և ներկայացված առաջարկությունների մասին:

(Ա. Ասատրյան, Ա. Պետրոսյան, Ս. Հարությունյան, Թ, Ավետիսյանը, Ա. Սիմոնյանը, Յ. Բեջանյան)

Օրակարգի 1-ին հարցը ներկայացրեց Ս. Տերտերյանը՝ անդրադառնալով «Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի ընդունելիս աշխատավարձի մասնակի փոխհատուցում գործատուին» ծրագրի շրջանակներում իրականացված աուդիտի արդյունքում արձանագրված թերություններին և ներկայացված առաջարկություններին:

Անդրադառնալով «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին կետով ներկայացված աշխատաշուկայում անմրցունակ աշխատանք փնտրող չզբաղված անձանց խմբերին, Ս. Տերտերյանը նկատեց, որ պարզ չի թե որ փաստաթղթերի հիման վրա պետք է ճանաչվի՝ վերը նշված Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին կետի 2), 7), 8) և 9)-րդ ենթակետերում ընգրկված, աշխատանք փնտրող չզբաղված անձանց կարգավիճակը:

Ա. Ասատրյանը շեշտեց, որ պետք է հստակ սահմանված լինի այն փաստաթղթերի ցանկը որով քաղաքացիները հնարավորություն կունենան որոշակի կարգավիճակ ձեռք բերեն և միաժամանակ պետք է հստակ սահմանել նաև թե ում կողմից պետք է ներկայացվեն այդ փաստաթղթերը՝ քաղաքացու թե ինտեգրված ծառայություններ մատուցող կազմակերպության մասնագետների կողմից:

Շարունակելով Ս. Տերտերյանը անդրադարձավ Ծրագրի շահառուների անհատական տվյալների՝ ՀՀ ՍԱՊԾ անհատական (անձնավորված) հաշվառման «Պառնաս» տեղեկատվական բազաների տվյալների հետ համադրման արդյունքներին, համաձայն որի՝

- թվով 28 շահառուների անձնական տվյալները չէին համադրվել ՀՀ ՍԱՊԾ անհատական (անձնավորված) հաշվառման <Պառնաս> տեղեկատվական բազայի տվյալների հետ, իսկ
- թվով 18 շահառուների տվյալները՝ զբաղվածության մասով, հակասում էին Օրենքի 38.1 հոդվածի 1-ին և 2-րդ կետերի պահանջներին:

Ա. Ասատրյանը Թ. Ավետիսյանին հանձնարարեց Օրենքի 38.1 հոդվածի մասով տալ պարզաբանում:

Ս. Տերտերյանի կողմից ներկայացված ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ արտահայտվեցին Ա. Ասատրյանը, Ա. Պետրոսյանը, Ս. Հարությունյանը, Ա. Մանգասարյանը, Թ. Ավետիսյանը և Ց. Բեջանյանը:

Քննարկման արդյունքում ներքին աուդիտի կոմիտեն միաձայն **ՈՐՈՇԵՑ**.

1.1 Այն շահառուները, որոնք մինչև ծրագրի մեկնարկը եղել են զբաղված, նրանց վճարված գումարները օրենքով սահմանված կարգով ետ գանձել:

Կատարող՝ ՀՀ ԱՍՀՆ «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության պետ Ա. Մանգասարյան **ժամկետ՝ 1 ամիս**

1.2 Այն շահառուների մասով, որոնք ծրագրի իրականացման ընթացքում միաժամանակ զբաղվածություն են ձեռք բերել մեկ այլ գործատուի մոտ, տալ պարզաբանում Օրենքի 38.1 հոդվածի մասով:

Կատարող՝ ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի աշխատանքի և զբաղվածության վարչության պետ Թ. Ավետիսյան **ժամկետ՝ 5 օր**

1.3 Թվով 28 շահառուների մասով, որոնց անձնական տվյալները չէին համադրվել ՀՀ ՍԱՊԾ անհատական (անձնավորված) հաշվառման <Պառնաս> տեղեկատվական բազայի տվյալների հետ, «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության մարզային և տարածքային կենտրոնները կատարում են ճշգրտումներ համապատասխան ՍԱՊԾ-ների կենտրոնների հետ և գրավոր իրազեկել ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի ներքին աուդիտի բաժին:

Կատարող՝ ՀՀ ԱՍՀՆ «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության պետ Ա. Մանգասարյան **ժամկետ՝ 1 ամիս**

1.4 «Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի ընդունելիս աշխատավարձի մասնակի փոխհատուցում գործատուին» ծրագրի ներքին աուդիտի արդյունքում ներկայացված դիտողություններն ու առաջարկությունները հաշվի առնել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2013 թվականի նոյեմբերի 25-ի «Զբաղվածության քաղաքականության նոր մոդելի ներդրման կազմակերպումն ապահովելու մասին» թիվ 157-Ա/1 հրամանով հաստատված Հավելված 2-ում ամրագրված իրավական ակտերի նախագծերի մշակման ընթացքում:

Կատարող՝ ՀՀ ԱՍՀՆ «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության պետ Ա. Մանգասարյան **ժամկետ՝ դեկտեմբերի 30**

2. Օրակարգի 2-րդ հարցի՝ Հայաստանի Հանրապետության 2012 թվականի պետական բյուջեի ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 10 բաժնի, 05 խմբի, 01 դասի «07. Այլ վայր աշխատանքի գործուղվող գործազուրկների նյութական ծախսերի հատուցում» ծրագրի աուդիտորական հաշվետվությունում արձանագրված թերությունների և ներկայացված առաջարկությունների մասին:

(Ա. Ասատրյան, Ա. Պետրոսյան, Ս. Հարությունյան, Թ, Ավետիսյանը, Յ. Բեջանյան)

Օրակարգի 2-րդ հարցը ներկայացրեց Ս. Տերտերյանը՝ անդրադառնալով «Այլ վայր աշխատանքի գործուղվող գործազուրկների նյութական ծախսերի հատուցում» ծրագրի գործընթացը կարգավորող ՀՀ կառավարության 2006 թվականի հունիսի 16-ի «Այլ վայր աշխատանքի գործուղվող գործազուրկի և աշխատանք փնտրող՝ չզբաղված հաշմանդամի նյութական ծախսերի հատուցման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի հունիսի 25-ի N 222 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 983-Ն որոշմամբ հաստատված կարգի ուսումնասիրության արդյունքում ներկայացված մի շարք առաջարկություններին, մասնավորապես,

ա/ կառավարության որոշման անվանումում <գործուղվող> բառը փոխարինել <մեկնող> բառով,

բ/ գույքի տեղափոխման դեպքում տրանսպորտային ծախսերի հաշվարկի համար մշակել մեթոդաբանություն,

գ/ Կարգի 7-րդ կետի գ/ ենթակետով նախատեսվող օրապահիկի վճարումը հանել:

Ա. Ասատրյանը նշեց, որ անհրաժեշտ է հաշվի առնել աուդիտորական հաշվետվությունում ներառված առաջարկությունները: Թ. Ավետիսյանը նշեց, որ արդեն հրամանով ստեղծվել է աշխատանքային խումբ վարչության երկու գլխավոր մասնագետների մասնակցությամբ և նրանց կողմից արդեն իսկ իրականացվում են ներկայացված առաջարկությունների ուսումնասիրություններ՝ փոփոխություններ կատարելու նպատակով:

Շարունակելով Ս. Տերտերյանը ներկայացրեց թվով 6 շահառուների տվյալները՝ զբաղվածության մասով, որոնք հակասում էին կնքված աշխատանքային պայմանագրերի դրույթներին, ինչպես նաև «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 38.1 հոդվածի պահանջներին:

Վերոգրյալով պայմանավորված Ա. Ասատրյանը **հանձնարարեց**՝ Թ. Ավետիսյանին՝ ներկայացնել օրենքի դրույթի պարզաբանում, որով այն անձինք, որոնք ծրագրի ընթացքում են դարձել զբաղված նրանցից վճարված գումարների ետ գանձում չկատարվի:

Ս. Տերտերյանի կողմից ներկայացված ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ արտահայտվեցին Ա. Ասատրյանը, Ա. Պետրոսյանը, Ս. Հարությունյանը, Ա. Մանգասարյանը, Թ. Ավետիսյանը և Ծ. Բեջանյանը:

Քննարկման արդյունքում ներքին աուդիտի կոմիտեն միաձայն **ՈՐՈՇԵՑ**.

2.1 Այն գործատուներից՝ որոնք խախտել են կնքված աշխատանքային պայմանագրերի դրույթները, վճարված գումարները օրենքով սահմանված կարգով ետ գանձել:

Կատարող՝ ՀՀ ԱՍՀՆ «Զբաղվածության պետական ծառայություն»

գործակալության պետ Ա. Մանգասարյան **ժամկետ՝ 1 ամիս**

2.2 Այն շահառուների մասով, որոնք ծրագրի իրականացման ընթացքում միաժամանակ զբաղվածություն են ձեռք բերել մեկ այլ գործատուի մոտ, տալ պարզաբանում Օրենքի 38.1 հոդվածի մասով:

Կատարող՝ ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի աշխատանքի և զբաղվածության վարչության պետ Թ. Ավետիսյան ժամկետ՝ 5 օր

2.3 «Այլ վայր աշխատանքի գործուղվող գործազուրկների նյութական ծախսերի հատուցում» ծրագրի ներքին աուդիտի արդյունքում ներկայացված դիտողություններն ու առաջարկություններն հաշվի առնել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2013 թվականի նոյեմբերի 25-ի «Զբաղվածության քաղաքականության նոր մոդելի ներդրման կազմակերպումն ապահովելու մասին» թիվ 157-Ա/1 հրամանով հաստատված Հավելված 2-ում ամրագրված իրավական ակտերի նախագծերի մշակման ընթացքում:

Կատարող՝ ՀՀ ԱՍՀՆ «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության պետ Ա. Մանգասարյան ժամկետ՝ դեկտեմբերի 30

3. Օրակարգի 3-րդ հարցի՝ Հայաստանի Հանրապետության 2012 թվականի պետական բյուջեի ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 10 բաժնի, 05 խմբի, 01 դասի «12. Մասնագիտություն ունեցող, սակայն աշխատանքային փորձ չունեցող գործազուրկների և աշխատանք փնտրող չզբաղված հաշմանդամների աշխատանքային պրակտիկայի կազմակերպումը գործատուի մոտ» ծրագրի աուդիտորական հաշվետվությունում արձանագրված թերությունների և ներկայացված առաջարկությունների մասին:

(Ա. Ասատրյան, Ս. Հարությունյան, Ց. Բեջանյան)

Օրակարգի 3-րդ հարցը ներկայացրեց Ս. Տերտերյանը՝ անդրադառնալով «Մասնագիտություն ունեցող, սակայն աշխատանքային փորձ չունեցող գործազուրկների և աշխատանք փնտրող չզբաղված հաշմանդամների աշխատանքային պրակտիկայի կազմակերպումը գործատուի մոտ» ծրագրի գործընթացը կարգավորող ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2011 թվականի հունիսի 1-ի «Աշխատանքի տոնավաճառի կազմակերպման, գործատուի մոտ մասնագիտություն ունեցող, սակայն աշխատանքային փորձ չունեցող գործազուրկների և աշխատանք փնտրող չզբաղված հաշմանդամների աշխատանքային պրակտիկայի կազմակերպման, գործատուի մոտ աշխատանք փնտրող չզբաղված հաշմանդամների համար աշխատատեղերի հարմարեցման կարգերը հաստատելու մասին» թիվ 48-Ն հրամանով հաստատված կարգի

ուսումնասիրության արդյունքում ներկայացված առաջարկություններին, մասնավորապես,

ա/ հրամանի անվանման «աշխատանքային փորձ չունեցող» բառերը փոխարինել «մասնագիտական աշխատանքային փորձ չունեցող» բառերով,

բ/ եռակողմ կնքվող պայմանագրերում ամրագրված զբաղվածության անվանումները մեկ միասնական դաշտ բերելու նպատակով՝ զբաղվածության անվանումները համապատասխանեցնել ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարի 2005 թվականի օգոստոսի 4-ի «Հայաստանի Հանրապետության դասակարգիչ ընդունելու մասին» թիվ 172-Ն հրամանով ընդունված ազգային դասակարգիչներին:

Շարունակելով Ս. Տերտերյանը անդրադարձավ Ծրագրի շահառուների անհատական տվյալների՝ ՀՀ ՍԱՊԾ անհատական (անձնավորված) հաշվառման «Պառնաս» տեղեկատվական բազաների տվյալների հետ համադրման արդյունքներին, համաձայն որի՝

- թվով 26 շահառուների անհատական տվյալների համադրման արդյունքում պարզվեց, որ 2010-2012 թվականներին աշխատանքային պայմանագրերի հիման վրա տվյալ շահառուները գտնվել են աշխատանքային հարաբերությունների մեջ գործատուների հետ, իսկ
- թվով 75 շահառուների անհատական տվյալները չհամադրվեցին՝ ՀՀ ՍԱՊԾ անհատական (անձնավորված) հաշվառման <Պառնաս> տեղեկատվական բազայի տվյալների հետ:

Ս. Տերտերյանի կողմից ներկայացված ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ արտահայտվեցին Ա. Ասատրյանը, Ա. Պետրոսյանը, Ս. Հարությունյանը, Ա. Մանգասարյանը, Թ. Ավետիսյանը և Ց. Բեջանյանը:

Քննարկման արդյունքում ներքին աուդիտի կոմիտեն միաձայն **ՈՐՈՇԵՑ**.

3.1 թվով 26 շահառուների մասով որոնք մինչև ծրագրում ընդգրկվելը գտնվել են աշխատանքային հարաբերությունների մեջ գործատուների հետ, յուրաքանչյուր շահառուի մասով տալ պարզաբանում և անհրաժեշտության դեպքում նրանց վճարված գումարները օրենքով սահմանված կարգով ետ գանձել:

Կատարող՝ ՀՀ ԱՍՀՆ «Զբաղվածության պետական ծառայություն»

գործակալության պետ Ա. Մանգասարյան **ժամկետ՝ 1 ամիս**

3.2 Թվով 75 շահառուների մասով, որոնց անձնական տվյալները չէին համադրվել ՀՀ ՍԱՊԾ անհատական (անձնավորված) հաշվառման <Պառնաս> տեղեկատվական բազայի տվյալների հետ, «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության մարզային և տարածքային կենտրոնների կողմից կատարել համապատասխան ճշգրտումներ համապատասխան ՍԱՊԾ-ների կենտրոնների հետ և գրավոր իրազեկել ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի ներքին աուդիտի բաժին:

Կատարող՝ ՀՀ ԱՍՀՆ «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության պետ Ա. Մանգասարյան ժամկետ՝ 1 ամիս

3.3 «Մասնագիտություն ունեցող, սակայն աշխատանքային փորձ չունեցող գործազուրկների և աշխատանք փնտրող չզբաղված հաշմանդամների աշխատանքային պրակտիկայի կազմակերպումը գործատուի մոտ» ծրագրի ներքին աուդիտի արդյունքում ներկայացված դիտողություններն ու առաջարկությունները հաշվի առնել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2013 թվականի նոյեմբերի 25-ի «Զբաղվածության քաղաքականության նոր մոդելի ներդրման կազմակերպումն ապահովելու մասին» թիվ 157-Ա/1 հրամանով հաստատված Հավելված 2-ում ամրագրված իրավական ակտերի նախագծերի մշակման ընթացքում:

Կատարող՝ ՀՀ ԱՍՀՆ «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության պետ Ա. Մանգասարյան ժամկետ՝ դեկտեմբերի 30

4. Օրակարգի 4-րդ հարցի՝ Հայաստանի Հանրապետության 2012 թվականի պետական բյուջեի ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 10 բաժնի, 05 խմբի, 01 դասի «13. Կազմակերպություններում հաշմանդամների համար աշխատատեղերի հարմարեցում» ծրագրի աուդիտորական հաշվետվությունում արձանագրված թերությունների և ներկայացված առաջարկությունների մասին:

(Ա. Ասատրյան, Ա. Պետրոսյան, Ս. Հարությունյան, Ա. Սիմոնյան, Ա. Մանվելյան Թ, Ավետիսյանը, Ա.Մանգասարյան, Ց. Բեջանյան)

Օրակարգի 4-րդ հարցը ներկայացրեց Ս. Տերտերյանը՝ անդրադառնալով «Կազմակերպություններում հաշմանդամների համար աշխատատեղերի հարմարեցում» ծրագրի գործընթացը կարգավորող ՀՀ

աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2011 թվականի հունիսի 1-ի «Աշխատանքի տոնավաճառի կազմակերպման, գործատուի մոտ մասնագիտություն ունեցող, սակայն աշխատանքային փորձ չունեցող գործազուրկների և աշխատանք փնտրող չզբաղված հաշմանդամների աշխատանքային պրակտիկայի կազմակերպման, գործատուի մոտ աշխատանք փնտրող չզբաղված հաշմանդամների համար աշխատատեղերի հարմարեցման կարգերը հաստատելու մասին» թիվ 48-Ն հրամանով հաստատված կարգի ուսումնասիրության արդյունքում ներկայացված մի շարք առաջարկություններին, մասնավորապես,

ա/ Կարգում սահմանված չի տվյալ Ծրագրի մասով հաշմանդամը քանի անգամ կարող է հանդիսանալ շահառուի կարգավիճակով,

բ/ Կարգում կարգավորված չի պայմանագրով սահմանված ժամկետից շուտ պայմանագրի դադարեցման դեպքում՝ գործատուի պարտավորվածությունը գույքի մասով՝ եթե պայմանագրի դադարեցման պատճառ է հանդիսացել գործատուն, կամ հաշմանդամի պարտավորվածությունը գույքի մասով՝ եթե պայմանագրի դադարեցման պատճառ է հանդիսացել հաշմանդամը,

գ/ Կարգում ամրագրել հետևյալ դրույթը. գործատուից պահանջել աշխատանքի միջոցների ձեռքբերման հիմնավորող փաստաթղթերը (հաշիվ ֆակտուրա, ՀԴՄ-ի կտրոն կամ այլ փաստաթղթեր), և այլն:

Ավարտելով Ս. Տերտերյանը ներկայացրեց ՎԱԾ-ի որոշիչ դերը ուսումնասիրվող ծրագրում:

Ս. Տերտերյանի կողմից ներկայացված ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ արտահայտվեցին Ա. Ասատրյանը, Ա. Պետրոսյանը, Ս. Հարությունյանը, Ա. Մանգասարյանը, Թ. Ավետիսյանը և Ծ. Բեջանյանը:

Քննարկման արդյունքում ներքին աուդիտի կոմիտեն միաձայն **ՈՐՈՇԵՑ**.

4.1 «Մասնագիտություն ունեցող, սակայն աշխատանքային փորձ չունեցող գործազուրկների և աշխատանք փնտրող չզբաղված հաշմանդամների աշխատանքային պրակտիկայի կազմակերպումը գործատուի մոտ» ծրագրի ներքին աուդիտի արդյունքում ներկայացված դիտողություններն ու առաջարկությունները հաշվի առնել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2013 թվականի նոյեմբերի 25-ի «Զբաղվածության քաղաքականության նոր մոդելի ներդրման կազմակերպումն ապահովելու մասին» թիվ 157-Ա/1 հրամանով հաստատված Հավելված 2-ում ամրագրված իրավական ակտերի նախագծերի մշակման ընթացքում:

Կատարող՝ ՀՀ ԱՍՀՆ «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության պետ Ա. Մանգասարյան ժամկետ՝ դեկտեմբերի 30

5. Օրակարգի 5-րդ հարցի՝ Հայաստանի Հանրապետության 2012 թվականի պետական բյուջեի ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 10 բաժնի, 05 խմբի, 01 դասի «11. Աշխատանք փնտրող հաշմանդամների աշխատանքային վերականգնման, մասնագիտական վերապատրաստման և խորհրդատվության ծառայություններ» ծրագրի աուդիտորական հաշվետվությունում արձանագրված խախտումների և ներկայացված առաջարկությունների մասին:

(Ա. Ասատրյան, Ջ. Բաղդասարյանը, Ա. Կեսոյանը, Ա. Մանվելյան)

Օրակարգի 5-րդ հարցը ներկայացրեց Ս. Տերտերյանը՝ անդրադառնալով «ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի «Աշխատանք փնտրող հաշմանդամների աշխատանքային վերականգնման, մասնագիտական վերապատրաստման և խորհրդատվության ծառայություններ» ծրագրով նախատեսված միջոցների շրջանակներում կնքված՝ «Հաշմանդամների մասնագիտական կողմնորոշման և աշխատանքային վերականգնողական կենտրոն» ՊՈԱԿ-ին» սուբսիդիայի տրամադրման ՍՏՊ-10.05.01.011 ծածկագրով պայմանագրի ուսումնասիրության արդյունքում արձանագրված խախտումներին:

Ա. Ասատրյանը նկատեց, որ ՊՈԱԿ-ի գործունեությունը պատասխանատու ստորաբաժանման կողմից առ այսօր ոչ մի իրավական ակտերով չի կարգավորվել:

Շարունակելով Ա. Ասատրյանը **հանձնարարեց՝** սեղմ ժամկետներում համապատասխան վարչություններին ներկայացնել առաջարկություններ կապված ՊՈԱԿ-ի գործունեության հետ:

Ս. Տերտերյանի կողմից ներկայացված ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ արտահայտվեցին Ա. Ասատրյանը, Ա. Պետրոսյանը, Ս. Հարությունյանը, Ջ. Բաղդասարյանը, Ա. Կեսոյանը և Ա. Մանվելյանը:

Քննարկման արդյունքում ներքին աուդիտի կոմիտեն միաձայն **ՈՐՈՇԵՑ**.

5.1 ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի՝ աշխատանքի և զբաղվածության, ինչպես նաև հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի վարչություններին,

«Զբաղվածության պետական ծառայություն» և «ՀՀ բժշկասոցիալական փորձաքննական» գործակալությունների պետերին՝ առաջարկություններ ներկայացնել «Հաշմանդամների մասնագիտական կողմնորոշման և աշխատանքային վերականգնողական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից մատուցվելիք ծառայությունների վերաբերյալ:

Կատարող՝ ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի աշխատանքի և զբաղվածության վարչության պետ Թ. Ավետիսյան, հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի վարչության պետ Ա. Կեսոյան, «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության պետ«Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության պետ Ա. Մանգասարյան, ՀՀ բժշկասոցիալական փորձաքննական գործակալության պետ Ա. Սիմոնյան **ժամկետ՝ 5 օր**

Կոմիտեի նախագահ՝ Ա. ԱՍԱՏՐՅԱՆ

Կոմիտեի անդամներ՝ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Մ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ֆ. ԲԵՐԻԿՅԱՆ

Ջ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ս. ՏԵՐՏԵՐՅԱՆ